ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

, , 2010 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի № 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> № 55-Ն որոշման հավելվածի 4-րդ գլխի 28-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերության ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 299-րդ կետով.

<<

299.	Կաթսայատուն Խորենացու 26 Ծանոթություն՝ սույն կետում նշված կաթսայատունը, համաձայն ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի թիվ 1405-Ն որոշման, ենթակա է օտարման գերակա հանրային շահ ճանաչված տարածքի ձեռք բերող <<Նունե Նալբանդյան>> ՍՊԸ-ին:	162.0	137.5

>> :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի № 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1405-Ն որոշմամբ Մովսես Խորենացու փողոցի 26 շենք /Մովսես Խորենացու 1-ին փակուղի/ հասցեի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և նշված տարածքի ձեռք բերող է ճանաչվել <<Նունե Նալբանդյան>> ՍՊ ընկերությունը:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 604-Ն որոշման հիման վրա Մովսես Խորենացու փողոցի 26 շենք հասցեի կաթսայատունը գրանցվել է որպես համայնքային սեփականություն:

Համաձայն <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ ձեռք բերողը պարտավոր է մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետից օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկել սեփականության օտարման պայմանագրի (այսուհետ՝ օտարման պայմանագիր) նախագիծը, որը և ձեռք բերողի կողմից պատշաճ ձևով ներկայացվել է:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն համարվող գույքը (ներառյալ՝ հողի և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության) օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի ու պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի պատշաճ և ժամանակին իրականացման անհրաժեշտությունը, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 23-ի հ. 55-Ն որոշման մեջ կատարել լրացում և Երևան քաղաքի սեփականություն համարվող 2010 թվականին օտարման առաջարկվող գույքի ցանկում լրացնել նաև Մովսես Խորենացու փողոցի 26 շենքի կաթսայատունը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի № 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ այլ ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ